«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Երևան ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcyerevan.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26.12.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նազելի Արսենյան
	Նարեկ Ադամյան
	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	ՖԶԲԽ-022
Խախտում՝	1. «Երևան» թիմի ֆուտբոլիստ Էդգար Մկրտչյանի (10107) կողմից ոչ սպորտային պահվածք դրսևորելը (Հավելված 1 Ի, 13-րդ կետ) 2. «Երևան» թիմի ֆուտբոլիստների ոչ սպորտային վարքագիծ դրսևորելը (Հավելված 1 Ի, 9-րդ կետ)
Առաջնություն՝	Ֆուտզալի Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնություն 2024-2025
Խաղ՝	«Երևան ՖԱ» - «Յունիսպորտ», 24.11.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Երևան» թիմի ֆուտբոլիստ Էդգար Մկրտչյանին (10107) որակազրկել 3 (երեք) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի նոյեմբերի 24-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):
   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 1 (մեկ) խաղը, պայմանականորեն չկիրառել: «Երևան» թիմի ֆուտբոլիստ Էդգար Մկրտչյանի (10107) նկատմամբ փորձաշրջան սահմանել 3 (երեք) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի փետրվարի 24-ը ներառյալ:
   «Երևան ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի՝ 25,000 ՀՀ դրամի չափով:

2. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Երևան ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ կիրառել «Նկատողություն»:
   «Նկատողություն» ստացած ֆուտբոլային սուբյեկտի կողմից նույն մրցաշրջանի ընթացքում երկրորդ և ավելի անգամ համանման կարգապահական խախտում թույլ տալու դեպքում կիրառվում է ավելի խիստ պատասխանատվության միջոց:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: